

Ենթակառուցվածք բաղադրիչ

Վերջին երկու տարում հայկական դրամի նկատմամբ ամերիկյան դոլլարի արժեզրկման և շինանյութերի գնաճի պայմաններում ակնհայտ էր, որ Ենթակառուցվածք բաղադրիչին տրամադրված 108 մլն դոլլարը բավարար գումար չէ իրականացնելու համար ծրագրի գործունեության հետ կապված բոլոր պլանները: Որպես դրա արդյունք՝ ՀՄՀ-Հայաստանը, ՀՄԿ-ի և ՀՀ Կառավարության հետ խորհրդակցելուց հետո, որոշում ընդունեց վերանայելու ծրագրի ծավալները և ապահովելու այն բաղադրիչների ֆինանսավորումը, որոնք առավելագույնս կնպաստեն Հայաստանի գյուղական համայնքներում աղքատության կրճատմանը: Վերանայման գործընթացը սկսվեց 2008թ. մարտին և վերջնական նախագծերի և շինարարական աշխատանքների համար տրամադրված ժամանակի սահմանափակ լինելու պատճառով ավարտվեց 2008թ. սեպտեմբերի 30-ին:

Ենթակառուցվածք բաղադրիչի վերանայման համար դիտարկվել է երկու սկզբունքային մոտեցում. (i) առաջնային համարել տարածաշրջանային ոռոգման համակարգերը և ընտրել տեխնիկապես ու տնտեսապես ամենաարդյունավետ ոռոգման համակարգերը, և երկրորդ՝ (ii) նախապատվություն տալ ենթաբաղադրիչներին և ընտրել տեխնիկապես ու տնտեսապես ամենանպատակահարմար ենթաբաղադրիչները:

Յուրաքանչյուր մոտեցման առավելություններն ու թերությունները քննարկելուց և վերլուծելուց հետո նախապատվությունը տրվեց երկրորդ մոտեցմանը:

Նպատակներ

Բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, 15-20%-ով ավելացնել բերքատվությունը և գյուղացիներին ջրի ընդհանուր մատակարարումը բարելավելու միջոցով ապահովել նաև ոռոգման ջրի անխափան մատակարարում, որն իր հերթին իրագործելի կդառնա Ոռոգվող գյուղատնտեսության Ենթակառուցվածք բաղադրիչի հետևյալ ենթաբաղադրիչների վերականգմամբ.

7 համակարգերի ամբողջական կամ մասնակի անցումը պոմպակայաններից ինքնահոս համակարգերի

Ինքնահոս համակարգերի կառուցմամբ կդադարի մի շարք պոմպակայանների աշխատանքը, որոնք տեխնիկապես խիստ վատթար վիճակում են և անկարող են ջուրը բավարար չափով մատակարարել: Վերանայված ծրագրի մեջ է ներառվել հետևյալ 7 ինքնահոս համակարգերի կառուցումը/վերականգնումը.

Այգեզարդ – Արարատի մարզ,

Շենիկ – Արմավիրի մարզ,

Հալավար – Արագածոտնի մարզ,

Սպիտակ – Լոռու մարզ,

Մանթաշ – Շիրակ մարզ,
Վարդենիս – Գեղարքունիքի մարզ,
Սեդրի – Սյունիքի մարզ:

Վերականգնման աշխատանքների սկիզբն ակնկալվում է 2009թ. կեսերին:

Մինչև 7 ջրամբարների կառուցում կամ վերականգնում

Ջրամբարների կառուցումը և վերականգնումը տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված չէ:

6 մայր ջրանցքների վերականգնում

Ծրագրի շրջանակներում ակնկալվում է 6 մայր ջրանցքների մինչև 40 կմ երկարությամբ հատվածների և հիդրո-տեխնիկական կառույցների վերականգնում: Ջրանցքների վերականգնումը կկրճատի մայր ջրանցքներում ջրի կորուստները, կընդլայնի ոռոգվող տարածքները և կբարելավի ոռոգման համակարգում ջրի բաշխումը: Ծրագիր են ընդգրկվելու հետևյալ մայր ջրանցքները.

Արտաշատ – Արարատի մարզ
Ստորին Հրազդան, Արավիր – Արմավիրի մարզ
Թալին – Արմավիր և Արագածոտնի մարզ
Արզնի-Շամիրամ – Արագածոտնի և Կոտայքի մարզ
Շիրակ – Շիրակի մարզ:

Շինարարությունը սկսվել է 2008թ. վերջին և կշարունակվի մինչև 2011թ.:

17 պոմպակայանների վերանորոգում և պարամետրերի փոփոխություն

Մարզերում վերանորոգման/վերակառուցման ենթակա պոմպակայաններն են.

Մխչյան I փուլ, Մխչյան II փուլ - Արարատի մարզ
Բուրաստան, Ավշար-Այգեվան, Նոյակերտ, Բաղրամյան, Արմաշ, Խոր Վիրապ
Ռանչպար I փուլ, Ռանչպար II փուլ - Արմավիրի մարզ
Նոյեմբերյան I փուլ, Աչաջուր I - Տավուշի մարզ
Որոտան-2 – Սյունիքի մարզ
Մարալանջ, Դաշտադեմ - Արագածոտնի մարզ
Մարտունի, Ջուլաքար - Գեղարքունիքի մարզ

Ծրագրում չեն ներառվել Վայոց Ձորի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում պոմպակայանների վերանորոգման աշխատանքները: Շինարարական աշխատանքները կսկսվեն 2009թ. օգոստոսին:

Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնում

Նախքան վերականգման աշխատանքները սկսելը անցկացվել է Արարատյան դաշտավայրի գերխոնավ հողերի բնապահպանական/հիդրոլոգիական ելակետային ուսումնասիրություն: Գրենաժային համակարգի վերականգման աշխատանքները ներառում են հին դիմհարային կառույցների վերացում և նորերով փոխարինում, կոլլեկտոր դրենաժների մաքրում և խորացում, արտեզյան և խորքային հորերի վերականգնում, Արարատյան դաշտավայրի 3 ենթատարածաշրջաններում՝ հարավարևելյան, կենտրոնական և հյուսիսարևմտյան, դրենաժային համակարգի որոշ ենթամակերեսային դրենաժային աշխատանքներ՝ գերխոնավ հողերում հնարավորինս հավասարակշռված էկոհամակարգի պահպանման պայմաններում: Աշխատանքների արդյունքից կօգտվեն Արարատի և Արմավիրի մարզերը: Վերականգման աշխատանքների սկիզբը նախատեսված է 2010թ. փետրվարին:

Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում

Ծրագրի հաջորդ առաջնային նպատակը հանրապետության բոլոր մարզերում երրորդ կարգի ջրանցքների վերականգնումն է: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է համայնքների կողմից 15% համաֆինանսավորման ռեսուրսների օգտագործում: Արմավիրի Գրիբոյեդով, ինչպես նաև Արարատի Աբովյան, Արևշատ և Լանջազատ համայնքներում երրորդ կարգի ջրանցքների վերականգման փորձնական ծրագիրը ավարտվեց 2008թ. օգոստոսին: Մյուս համայնքներում վերականգման աշխատանքները կսկսվեն 2009թ. սեպտեմբերին: